Է.

Սեբաստիոյ Յովնան եպիսկոպոսին նկատմամբ արդէն բաւական տեղեկութիւններ տուած են մեզ Մխիթարայ հին և նոր կենսագիրները։ Առանձին գլուխ մ'ալ կը գտնենք Հ. Գ. Գալեմքեարեանի «Կենսագրութիւններ Երկու Հայ Պատրիարքներու և Տասն Եպիսկոպոսներու և ժամանակին Հայ կարողիկեայք» անուն հատորիկին մէջ, ուր ժամանակագրական կարգաւ կը յիշատակուին Յովնանու կենաց և գործոց գլխաւոր կէտերը՝ ընտիր ուսումնասիրութեամբ մը։ Մեր հոս ներկայացուցած նամակը ունի փոքրիկ նորութիւն մը սա տեսակէտով, որ մինչ Հ. Գալեմքեարեան կը գրէ որ այս վիճակն (այսինքն անոր առաքելութեան շրջանէն) միայն ծանօր է որ 1706ին Սպահիայեն 58 դահեկան ողորմութիւն ղրկած է չքաւոր Աբրահոր, Յովնան եպս.ի ինքնագիր թղթէն կ'իմանանք, ի մէջ ուրիշ տեղեկութեանց, որ Հռովմէն առ Մխիթար ղրկեր է նաև ողորմութիւն 1717ին « տասն և մին տօպլի և կէս և բ (երկու) սիվիլա »։

Վերապատուելի տնդ Մխիթարի Ապբայի և Ադարանուրեան վրդպտի.

Զգիր Վերապատուելութե քո զգրեալն ի յգստոսի իը. ընկալայ ի սպտմբրի ա. որով ծանեա զողորմութին այն հրկւոր գոլ այժմ յղելն առ Վերապատուելութիդ. և յոյժ ուրախ եղէ ազդ առնելն իմ զնա փութով, նա ևս գրեալ էիր թէ լաւ է փոստիւ ուղարկել, զի է սիկուռ, ահաւասիկ, տասն և մին տօպլի և կէս և բ սիվիլիայ, եդի ներ փոքրիկ ղուդին ներ պահարանի կնքեալ. և ի վերան գրեալ է. հասցէ ի ձեռն Մխիթար ապբային, մեծ ի սան մարթին, ի Վենետիկ, և ունի նշան զայս ՅԽՅ։ Իբրև ընդունիցիս զնա ամբողջ, յիշեսցես զմեզ ի յաղօթս. և հայցիցես ի տնէ վս մեր, պարգևել մեզ զշնորհ իւր սբ երկիւղի ի սիրոյ, որ է յոյժ հրկւր։ Եւ դու լիջիր ողջ ընդ յամենայամ ժամս, ի բարձրութիւն սբ եկղեցւ, ի պայծառութիւն ազգի. և ցնծութի սրտից մերոց. քիւ տբ ամէն։ Զլուրն այն աւետեաց զոր գրեալ էիր, այսինքն, գխրտկումն տեկց, զկանգնումն սբ խաչին ի հրապարակին Պէլէկռատու, և զբարձրացումն սբ եկղեցւն կթղկէի, կարի յոյժ հաճոյական ցնծութի էր սրտից մերոց, և իրաւի, զի գեղեցիկ և վայելուչ է ստէպ կրկնելն զցանկալի յաղթութիս այս, առ ունկս փափաքողաց, սակս որոյ բիւր գոհութիս և շնորհակալութիս պարտիմք մատուցանել այ, որ պարգևեաց զուրախութիս այս մեծ. մայրն իմ և եղբայրն իմ քո հբամանաց աջն համբուրելով ողջոյն տան, եղիայ վրդպտի և այլոց եղբրցն իմոց ընդ հովանեաւ թևոյ քոյ եղելոցն ողջոյն տամ սիրով

գրցւ 1717 ի սպտմբրի գ. ի թաղն սանթ օնօֆրիոյ ի Հռոմ

Վերապատուելութե քում նուաստագունեղ ծոյ Յունան Եպս. Սեպստիոյ

Մեր թարգման զալադացի տր յակոբի եղբօրորդի յարութին եկն ի Հռոմ. կամէր տօմէնիկանի կարգն մտանել, որ թէպէտ ընկալան, սակայն ինքն ոչ հաճեցաւ ասելով, թէ ես կամիմ պտրգիչ լինիլ. նք պատճառեցին գքերկնութի չգիտենալն. սակս որոյ հրժրցւ ի նոցանէն. արդ կամի գալ ի Վենետիկ. ես կամէի ընդունել զնա, բայց երկեա, մի՛ գուցէ խռովութի լիցի պատճառ այսու ի մէջ իմ և եղեսացուն։ Ցանիր ևս. որ մէջն եղեալ գիրն խնդրեմ որ փութով հւտրմ անձի հետ յղիցես ի ձեռն պատրի վերծօյին կամ ընկերի նորին. ողջ լեր։